# Հաշվետվություն

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կողմից 2026 թվականի առաջին եռամսյակում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակազմի փաստաթղթաշրջանառության բաժնում իրականացվել է ընդամենը 8856 փաստաթղթաշրջանառություն, որից՝ 3218 մտից, 2016 ելից, 3622 ներքին:

**2026** թվականի առաջին եռամսյակում ստացվել է 137 դիմում:

**ա**/ Դրամական օգնություն է խնդրել 86 քաղաքացի: 86 քաղաքացու դիմումներին պատասխանվել է:

**բ**/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 8 քաղաքացի, բոլոր 8 դիմումներին պատասխանվել է:

**գ**/ Առողջապահական բնույթի 16 դիմում է ստացվել, ստացված 16 դիմումներն էլ բավարարվել են:

**դ**/ Աշխատանքի հարցերով դիմել է 9 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:

**ե**/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է 6 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական պատասխան:

**զ**/ Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 1 քաղաքացի և ստացել է դրական պատասխան:

**է**/ Հողաշինության հարցերով դիմումներ չեն ներկայացվել:

**ը**/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 3 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

**թ**/ Ստացվել է այլ բնույթի 8 դիմում: